ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ԱՄՓՈՓԵԼ Է 17.07.2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

24.07.2023 20:56

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը 24.07.2023 թվականին ամփոփել է «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված
անձանց (այսուհետ՝ դիմորդ)՝2023թ. հուլիսի 17-ի որակավորման քննությունների առաջին (գրավոր) փուլի արդյունքները՝ ըստ ծածկագրերի:

Գրավոր քննություններին մասնակցելու համար դիմում է ներկայացրել 9-ը դիմորդ, որոնցից 3-ը՝ քաղաքացիաիրավական ուղղվածությամբ, 6-ը՝ քրեաիրավական ուղղվածությամբ:

Դիմորդներից գրավոր փուլին ներկայացել են 8-ը:Դիմորդներից մեկը քննասենյակը լքել է մինչև քննության ավարտը՝ առանց գրավոր փուլի առաջադրանքը հանձնելու:

Գրավոր փուլին մասնակցած 7 դիմորդներից,գրավոր փուլը հանձնել է 1 դիմորդ՝քաղաքացիաիրավական ուղղվածությունից:

Քրեաիրավական ուղղվածության դիմորդներից ոչ մեկը գրավոր փուլը չի հանձնել:

2023թ. հուլիսի 25-ին ժամը 13:00-ին ք.Երևան, Ջաքյան 7-2 հասցեում գտնվող ՀՀ փաստաբանների պալատի շենքի 4-րդ հարկի մեծ դահլիճում բացվելու է կնքված արկղը՝ քննական աշխատանքների հեղինակներին նույնականացնելու նպատակով:

Բեռնել Հանձնաժողովի որոշումը

Բեռնել Քաղաքացիաիրավական ուղղվածության աշխատանքների հեղինակների ցանկը

Բեռնել Քրեաիրավական ուղղվածության աշխատանքների հեղինակների ցանկը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&

parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })